# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020 թվականի համար հաստատելու մասին

2. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 58-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 35-րդ հոդվածով «Նորմատիվ իրավական ակտերի» օրենքի 33-րդ հոդվածի պահանջով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

2. Վերին Պտղնի համայնքի ղեկավարին՝ Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին:

3. Ուժը կորցրած ճանաչել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020 թվականի համար հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշումը:

4.Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ է մտնում Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2020թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 30-Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 11

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 250000 | - | - | 250000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | _ | 1 | 200000 | _ | _ | 200000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | _ | 1 | 180000 | _ | - | 180000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 195000 | - | - | 195000 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 193000 | - | 9650 | 202650 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 155000 | - | 23250 | 178250 |
| 7 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 152000 | - | 15200 | 167200 |
| 8 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 109000 | - | - | 109000 |
| 9 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 120000 | - | - | 120000 |
| 10 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 120000 | - | - | 120000 |
| 11 | | Բանվոր | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 95000 | - | - | 95000 |
| | Ընդամենը | | | | 11 | 1769000 | - | 48100 | 1817100 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Վերին Պտղնի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 58-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Վերին Պտղնի համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 24-ի
թիվ 58-Ա որոշման

փոփոխություն Վերին Պտղնի համայնքի ավագանու
2020թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 31-Ա որոշման

ԿԱՐԳ

# ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

# ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1.Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:
2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:
3.Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:
4.Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

**4.1 Պաշտպանության կազմակերպման բնագավառ**

1) քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության համար տրամադրել դրամական օժնություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով:
2) պարտադի ժամկետային զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման համար տրամադրել դրամական օժնություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով ։

**4.2 Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ**

1) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցին տրամադրել դրամաշնորհ մինչև 300000 ՀՀ դրամի չափով:
2) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ տրամադրել դրամական աջակցություն մինչև 10000 ՀՀ դրամի չափով:
3) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաներին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ նվիրել գրենական պիտույքներ յուրաքանչյուրին մինչև 10000 ՀՀ դրամի չափով:
4) Վերին Պտղնի համայնքում բնակվող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում մինչև 150 000 ՀՀ դրամի չափով ։
5) Վերին Պտղնի համայնքում բնակվող բարձր առաջադիմությամբ (գերազանց սովորող) ուսանողներին՝ ուսումը խրախուսելու նպատակով , տալ պարգևատրում մինչև 50000 ՀՀ դրամի չափով:
6) Ամանորյա նվերներ և միջոցառման կազմակերպման համար մինչև 200000 ՀՀ դրամի չափով:

**4.3Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բանագավառ**

Վերին Պտղնի առողջության առաջնային պահպանման կենտրոնին տրամադրել դրամաշնորհ մինչև 200000 ՀՀ դրամ:

**4.4 Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ**

1) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող բնակչին տրամադրել դրամական աջակցություն մինչև 150000 ՀՀ դրամի չափով:
2) Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին արձակուրդի տրամադրման հետ մեկտեղ վճարել բուժման գումար մեկ ամսվա աշխատավարձի չափով:
3) Համայնքապետարանի աշխատակազմի կին աշխատողներին մարտի 8-ի կանանց միջազգային օրվա կապակցությամբ տալ ֆինանսական աջակցություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով:

5. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670,
էլ.փոստ verinpighni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և օրենքի 34-րդ հոդվածը:

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի ֆոնդային մասը հողի օտարումից և նպատակային նշանակության փոփոխմամբ եկամուտների հաշվին եկամտային և ծախսային մասով ավելացնել 3 346 850 ՀՀ դրամի չափով :
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-իթիվ 61-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն թիվ 1,2,3 հավելվածների;

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԾՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱԾՈՏ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՎԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի
սեպտեմբերի 10-իթիվ 32-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ հատվածի 2111 տողի, բաժին 01 խումբ 1, դաս 1, 61 100  000 թիվը փոխարինել 48 100 000թվով:

2. Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ հատվածի 2424 տողի, բաժին 04 խումբ 2, դաս 4, 10506000 թիվը փոխարինել 0 թվով:

3. Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ հատվածի 2631 տողի, բաժին 06 խումբ 3, դաս 1,  7894000 թիվը փոխարինել 10 694 000թվով:

4. Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ հատվածի 2823 տողի, բաժին 08 խումբ 2, դաս 3,  0 թիվը փոխարինել 24 052 850 թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի
սեպտեմբերի 10-ի թիվ 32-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ հատվածի 5112 տողի, 5112 հոդվածի, 113191733.80 թիվը փոխարինել 116044583.80 թվով:

2.Որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ հատվածի, 5134 տողի, 5134 հոդվածի, 3 800 000 թիվը փոխարինել 4 294 000թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի
սեպտեմբերի 10-իթիվ 32-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ հատվածի, 2111տողի, բաժին 01, խումբ 1, դաս 1, 5112 հոդվածը 20000000 թիվը փոխարինել 7000000 թվով:

2.Որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ հատվածի 2424տողի, .բաժին 04, խումբ 2, դաս 4, 5112 հոդվածի 10 000 000 թիվը փոխարինել 0 թվով, 5134 հոդվածի 506000 թիվը փոխարինել 0 թվով,

3.Որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ հատվածի 2631 տողի, բաժին 06,խումբ 3, դաս 1, 5112 հոդվածի 7000000 թիվը փոխարինել 9 800 0000 թվով ։

4.Որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ հատվածի 2823 տողի, բաժին 08,խումբ 2, դաս 3, 5112 հոդվածի 0 թիվը փոխարինել 23 052 850 թվով՝ 5134 հոդվածի 0 թիվը փոխարինել 1000 000 թվով ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 33-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ. 30-րդ և 31-րդ կետերի պահանջներով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Սուսաննա Կոբեյանին սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 07-062-0203-0048 գյուղատնտեսական նշանակության վարելահողի 0.012 հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**